# Ծնողի կապի հնարավորություն

Գլենդելի կրթաշրջանի (GUSD) Ծնողի կապ (ParentConnection) անվամբ ինտերնետային ցանցը նախագծվել է ծնողներին/խնամակալներին ընդարձակ տեղեկություններ տալու իրենց զավակի կրթական, այդ թվում՝ դասարանային ծրագրի, գնահատականների, դպրոց հաճախումների, transcript-ի, վարքագծի ու այլնի մասին:

ParentConnection հնարավորությունից օգտվելու համար խնդրվում է հետևյալ փուլերին հետևել.-

1. Այցելեք ինտերնետային **parent.gusd.net** հասցեն (www չի պահանջվում): Իրական ինտերնետային հասցեն կերևա որպես.- https://zangle-web.gusd.net/parentconnect/
2. Գրանցեք 7 միավորով PIN # համարը, ձեր ժամանակավոր գաղտնաբառը (անձամբ կարող եք ստանալ ձեր զավակի դպրոցից) և ապա սեղմեք Logon կոճակը:




3. Ապա, դուք պետք է սեղմեք ձեր ժամանակավոր գաղտնաբառը, ձեր ներկա էլփոստի հասցեն և ապա նոր գաղտնաբառը, որպեսզի կարողանաք ապագայում սույն համակարգից օգտվել:




**ԿԱՐԵՎՈՐ Է՝**
Նոր գաղտնաբառը պիտի բաղկացած լինի 5 տառերից կամ նշաններից:

Երբ, որ դուք գրանցեք ձեր նոր գաղտնաբառը և հաստատեք ու սեղմեք **Submit** կոճակը, դուք կստանաք հետևյալը:




Այսուհետև, դուք պետք է ձեր նոր գաղտնաբառը օգտագործեք համակարգից օգտվելու համար:

Երբ արդեն մուտք եք գործել ParentConnection-ը, օգտագործեք էկրանի ձախ կողմի ցանկը՝ ձեզ անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար:

Ստորև տրամադրվել է ParentConnection անվամբ ինտերնետային ցանցի ծնողի կապի տեղեկության օրինակը: Ոչ բոլոր կապերն են տրամադրելի տարրական դպրոցի աշակերտների համար:

| | |
|---|---|
| Demographics | Տրամադրում է հիմնական տեղեկություններ ձեր զավակի մասին: |
| Contacts | Ցույց է տալիս աշակերտին առնչվող անձանց հետ կապ հաստատելու բոլոր տեղեկությունները և նրանց կապակցությունը: |
| Schedule | Տրամադրում է ձեր զավակի դասարանային ծրագիրը և ուսուցիչները: Դուք կարող եք ուսուցիչների հետ կապ հաստատել այս էկրանից օգտվելով: |
| Attendance | Ստուգեք ձեր երեխայի դպրոց հաճախումները: Այս տեղեկությունները անմիջապես այժմեականացվում են: |
| Assignments | Թույլ է տալիս ծնողին/խնամակալին ստուգելու երեխայի դասարանային աշխատանքները: Այս տարբերակը մատչելի է այն ուսուցիչների համար միայն, որոնք ինտերնետը օգտագործում են գնահատականները արձանագրելու համար: |
| Marks | Ստուգեք ձեր զավակի յուրաքանչյուր դասաժամի գնահատականները: |
| Transcript | Ցույց է տալիս աշակերտի վկայականի բոլոր գնահատականները: |
| Grad Rqmnts | Ցույց է տալիս միջնակարգի ավարտման և դասարանը փոխադրվելու պայմանները և ձեր զավակի այդ ուղղությամբ կատարած առաջընթացը: |
| Testing | Ցույց է տալիս Կրթաշրջանի և նահանգի կողմից պահանջված ձեր զավակի հանձնած քննությունների արդյունքները: |
| Behavior | Ցույց է տալիս ձեր զավակի վարքին առնչվող բոլոր միջադեպերը: |
| Health | Ցույց է տալիս Առողջության հետ կապվող բոլոր գրանցվածտեղեկությունները: |

Հավելյալ կապեր կարող եք գտնել ParentConnection անվամբ գլխավոր էջի վրա: Դրանք են՝

Account Help About Sign Out

**Account** կապը թույլ է տալիս, որ դուք փոխեք ձեր գաղտնաբառը և էլփոստի հասցեն: **Account Notifications** կապը թույլ է տալիս, որ դուք բաժանորդագրվեք զանազան ծանուցումների համար: **Help** կապը ավելի մանրամաս տեղեկություններ է տալիս համակարգի մասին: **About** կապը տալիս է համակարգի տարբերակի համարը: **Sign Out** կապը օգտագործեք համակարգից դուրս գալու համար:

# Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան

## Ինտերնետային ցանցի հնարավորության (Zangle ParentConnection) դիմումնագիր

Գլենդելի հանրային դպրոցների Ծնողի կապ (ParentConnection) անվամբ ինտերնետային ցանցը հնարավորություն է տալիս ծնողներին/խնամակալներին տեղեկանալ իրենց երեխայի մասին: Օգտագործելով Անձնական ինքնության համարը (PIN), ինչպես նաև գաղտնաբառը, ծնողը/խնամակալը կարող է կապվել դպրոցի տվյալների բազայի հետ և դիտել իր երեխայի առաջադիմության զեկույցը, հաճախումները, դասարանների ծրագիրը և այլն:

(ParentConnection) անվամբ ինտերնետային ցանցի Անձնական ինքնության համարը (PIN) և ժամանակավոր գաղտնաբառը ստանալու համար դուք պետք է այս թերթիկը ներկայացնեք ձեր զավակի դպրոցի գրասենյակը: PIN-ը և ժամանակավոր գաղտնաբառը կտրվի միայն այն անձին, որի անունը գրված է աշակերտի ֆայլի մեջ: Ձեզ կառաջարկվի ձեր ինքնությունը հաստատել ցույց տալով ձեր վարորդության վկայականը կամ նկարով ինքնությունը հաստատող քարտը:

| Խնդրեմ տպագիր գրել | Հայր/Խնամակալ (Ազգանուն, Անուն) | Մայր/Խնամակալ (Ազգանուն, Անուն) |
|---|---|---|
| Անուն | | |
| Տան հասցե | | |
| Տան հեռախոսահամար | | |
| Բջջային հեռախոսահամար | | |
| Էլփոստի հասցե | | |

### Նշե՛ք Գլենդելի հանրային դպրոցները հաճախող ձեր երեխաների անունները

| Աշակերտի(ներ)ի անուններ | Աշակերտի ID# | Դպրոց | Դասարանային մակարդակ | Կապակցություն (մայր, հայր, խնամակալ) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

| | *Դպրոցի օգտագործման համար* | |
|---|---|---|

Date Received at School: Received by:

How confirmed: (Circle One) Driver's License Identification Card

Student ID(s) to be made available for ParentConnection access: